

## ԿԱՐԾԻՔ

Ոուզաննա Սլավիկի Ժամկոցյանի՝ «Հոգերանական պաշտպանական մէխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկան՝ անձի հասունացման տարբեր փուլերում» ԺԹ. 00.01 – «Ընդհանուր հոգերանություն, հոգերանության տեսություն և պատմություն, անձի հոգերանություն» մասնագիտությամբ հոգերանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ոուզաննա Սլավիկի Ժամկոցյանի՝ «Հոգերանական պաշտպանական մէխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկան՝ անձի հասունացման տարբեր փուլերում» ատենախոսությունը նվիրված է հոգերանական պաշտպանությունների և անձնային կառույցների հետ նրանց փոխհարաբերությունների արդիական թեմային:

Հասարակության ժամանակակից զարգացման հիմնարար միտումը հասարակության համակարգային բարդացումն է, նրա տեղեկատվական գերհազեցվածությունը, որը պահանջում է անձնային այն կառույցների ինտենսիվ զարգացում, որոնք առավելագույնս են ապահովում անձի արդյունավետ աղապտացիան, հոգերանական պաշտպանությունը, որով պայմանավորում է նրա սուբյեկտիվ հարմարավետությունը՝ մասնագիտական, ընտանեկան, առօրյա գործունեության մեջ:

Վերջին տարիներին գնալով ավելի շատ հեղինակներ են անդրադառնում հոգերանական պաշտպանության ֆենոմենի ուսումնասիրությանը՝ որպես տարիքային տարբեր փուլերում անձնային բնութագրերի զարգացումը կարգավորելու կարևոր մէխանիզմ: Հոգերանական պաշտպանությունը կարևոր դեր է խաղում անձի ձևավորման, անձի և նրա առանձնահատկությունների ինքնակատարելագործման գործընթացում: Անձի ձևավորման, ինքնորշման խնդիրների լուծման, ինքնագիտակցության ձևավորման, կյանքի ուղու ընտրության համար հատկապես կարևոր են պատանեկությունը և երիտասարդությունը:

Պատկերացումների երկիմաստության հիմնական նախադրյալը հենց հետազոտության առարկայի բարդությունն է, նրա պատկանելությունը հոգեկան կյանքի անգիտակցական կրղմին: Հոգերանական պաշտպանությունը ներառված է «անձնավորություն - հոգերանական պաշտպանություն - պաշտպանական վարքագիծ» եռյակում և պետք է դիտարկվի որպես բազմակողմ երևույթ: Այնուամենայնիվ, այսօր գիտությունը չունի նման բարդ երևույթը ընդգրկող մեկ ընդհանուր հայեցակարգ, թեև շատ ոլորտներում (հոգեվերլուծություն, հումանիստական հոգերանություն, անձի տեսություն ընդհանրապես, հոգեթերապիա) ուղղակի կամ անուղղակի ուսումնասիրություններ կան:

Միևնույն ժամանակ, պարզաբանված չեն այս բարդ երևույթի զարգացման հիմնարար օրինաչափություններն ու մէխանիզմները, հայտնաբերված չեն հոգերանական պաշտպանության հատուկ գործիքակազմը, չկա պաշտպանական մէխանիզմների կառուցողական դասակարգում, բավականաշափ ուսումնասիրված չեն դրա դինամիկան օնտոգենեզում, կախվածության առանձնահատկությունները՝ գործունեության տեսակից, տիպարանությունից և շատ ուրիշ գործուներից, բավականաշափ մշակված չեն:

Այսպիսով, ուսումնասիրվող խնդրի արդիականությունը որոշվում է ինչպես գիտական գիտելիքների զարգացման միտումներով, այնպես էլ սոցիալական

պրակտիկայի առկա պահանջներով։ Հոգեբանական պաշտպանության ուսումնասիրությունը կարևորագույն տեսական և գործնական խնդիրներից է, որը արդիական հետազոտություն և մշակվածություն է պահանջում։

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, առաջադրված է վարկածը, առկա են հետազոտության նպատակն ու խնդիրները, նշված է ատենախոսության հետազոտության տեսական և գործնական նշանակությունը։

Առաջին՝ «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հիմնախնդիրը գիտական գրականության մեջ» գլխում ներկայացված է պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության հիմնական հայեցակարգային մոտեցումների, գործնքացների և գործառույթների վերլուծական ակնարկ։ Հեղինակը մեկնաբանում է գիտական գրականության մեջ առկա հոգեբանական պաշտպանության հիմնախնդիր, պաշտպանական մեխանիզմների ուսումնասիրության հիմնական հասկացությունները։ Դիտարկվել են նաև հոգեբանական պաշտպանության բաղադրիչները։ Տեսական վերլուծության արդյունքում պարզվել է, որ հոգեբանական գրականության մեջ «հոգեբանական պաշտպանություն» հասկացությունը դիտարկվել է որպես գիտակցության և անգիտակցականի միջև կոնֆլիկտի լուծման միջոց, անձի ձևավորված բնավորություն, մարդկային գիտակցության նորմալ մեխանիզմ, արտաքին և ներքին կոնֆլիկտների լուծման անարդյունավետ և վնասակար միջոց, հույզերի արդյունք։

Առաջին տեսական գլխում, որը նշանակալի է ծավալով, քննարկվում են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների ձևավորման և դասակարգման մոտեցումները, տարիքային զարգացման տարբեր փուլերում պաշտպանական մեխանիզմների առանձնահատկությունները, ծնող-երեխա հարաբերությունների համատեքսում դրանց ձևավորման և դրսուրման առանձնահատկությունները։ Ենթագլուխներում քննարկվում են նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների տեսակները, դրանց դասակարգման և տեսակների վերաբերյալ գիտական մոտեցումները, ինչպես նաև դրանց առանձնահատկությունները։

Ինքնագիտակցության և հասուն անձնավորության վերաբերյալ հիմնական մոտեցումները, հասուն անձնավորության առանձնահատկությունների և դրանց օնտոգենետիկ զարգացման հիմնախնդիրները քննարկվում են առաջին գլխի վերջին ենթագլուխում։ Հատկապես մանրակրկիտ ուսումնասիրված են Վ.Վ. Ստոլինի, Ի.Վ. Չեսնոկովայի, Տ. Շիբուտանիի, Լ. Բոժովիչի տեսական մոտեցումները. Վերլուծելով Կ. Ռոցերսի և Ա. Մասլովի՝ հասուն անձնավորության բնորոշ չափորոշիչների վերբերյալ մոտեցումները, հեղինակը թվարկում է հասուն անձին բնորոշ որոշ չափանիշներ։

Ատենախոսության երկրորդ՝ «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձի բնութագրերի՝ անձնային կառույցների, հատկությունների փորձարարական ուսումնասիրություն» գլխում ներկայացված են հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդներն ու դրանց ընտրության հիմնավորումը։ Հեղինակը ներկայացրել է ընտրակազմի ընտրության տրամաբանությունը, ուազմավարությունը, փուլերն ու հիմնավորումը։ Մանրամասն ներկայացված են փորձարարական հետազոտության համար ընտրված և կիրառված քանակական և որակական վերլուծության, մաթեմատիկական վիճակագրության մեթոդները, ինչպես նաև

թեստավորման շրջանակում օգտագործված մեթոդիկաների եռթյունն ու անցկացման ընթացակարգերը:

Ատենախոսի կողմից ներկայացված են հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային առանձնահատկությունների, անձնային կառույցների, հատկությունների ուսումնասիրության արդյունքները, իրականացված է հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների համահարաբերակցային ցուցանիշների վերլուծություն դեռահասների (14-15 տարեկան) և երիտասարդների (22-25 տարեկան) տարիքային խմբերում: Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային կառույցների, երկու տարիքային խմբերի բնութագրերի համահարաբերակցության ցուցիչների ուսումնասիրելիս՝ հեղինակը վերլուծել է հոգեբանական պաշտպանական տարրեր մեխանիզմների օգտագործման հաճախականությունը, ուսումնասիրված ցուցանիշների զարգացման մակարդակները: Վերլուծված են նաև հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և ուսումնասիրված ցուցանիշների և առանձնահատկությունների համահարաբերակցային կապերը:

Պաշտպանական մեխանիզմների և Ես-ի կառուցվածքների միջև համահարաբերակցային վերլուծության արդյունքում պարզվել է, որ դեռահատության տարիքում Ես-ի կառույցների պաշտպանությունը, հիմնականում, իրականացվում է տարրական պաշտպանական մեխանիզմների կողմից:

Այսպես, դեռահասի ինքնաշխատահությունը, ինքնաշխանդունումը, ինքնահարզանքը, ինքնահամակրանքը, ինքնակառավարումը պաշտպանվում են հիմնականում մերժում, արտամղում, ռեզըն, պրոյեկցիա, երբեմն՝ կոմպենսացիա և հակագրեցության կազմակրում պաշտպանական մեխանիզմների կողմից: Ինտելեկտուալիզացիան փոխկապակցված է ինքնակառուցվածքներից միայն էզոցենտրիզմի հետ (սեփական Ես-ին կողմից): Այսպիսով, դեռահասի անձնային կառուցվածքները դեռ բավականաշավի զարգացած չեն, ուստի նա կարողանում է հոգեբանական պաշտպանություն իրականացնել հիմնականում տարրական մեխանիզմների միջոցով: Այնուամենայնիվ, հասուն պաշտպանական մեխանիզմներն արդեն կիրառվում են դեռահասի կողմից, թեև ոչ այնքան հաճախ, որքան տարրական պաշտպանական մեխանիզմները: Ատենախոսը ենթադրում է, որ 22-25 տարեկան երիտասարդները ավելի հաճախ օգտագործում են ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ, ինչպիսիք են ինտելեկտուալիզացիան, կոմպենսացիան: Նվազում է մերժում, ռեզըն, փոխարինում պաշտպանական մեխանիզմների կիրառման հաճախականությունը: 22-25 տարեկանների խմբում ինտելեկտը, կամքը զարգացած են, հոգեբերն ավելի կառավարելի են: Կոմպենսացիա և հակագրեցության կազմակրում պաշտպանական մեխանիզմների դրսերումը պայմանավորվում է կամքի ուժի զարգացման մակարդակով: Անձի զարգացմանը գուզընթաց հարմարվողականության խնդիրների լուծման համար առաջ են քաշվում նոր պահանջներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է դառնում կիրառել իմացական հիմքի վրա գործող նոր պաշտպանական մեխանիզմներ:

Համեմատական վերլուծության ընթացքում Ռ. Ժամկոցյանը ստացել է տվյալներ, որոնք նրան թույլ են տալիս համարել, որ ինտելեկտուալիզացիա պաշտպանական մեխանիզմը դեռահասների մոտ կապված է ինտելեկտի հետ հարաբերակցային միջին դրական կապով, իսկ երիտասարդների մոտ ինտելեկտի և ինտելեկտուալիզացիայի միջև ամուր կապ կա: Միաժամանակ բացասական միջին ուժգնության կապ է արտահայտվել

ոեզրեսի հետ, ինչը, նրա կարծիքով, ապացուցում է, որ ինտելեկտուալ գարգացման որոշակի մակարդակում ոեզրես պաշտպանական մեխանիզմը չի օգտագործվում և հակառակը, քանի որ երիտասարդները խնդիրների լուծման բավարար միջոցներ ունեն և ճանաչողական մակարդակում խնդիրները լուծելու և ներքին լարվածությունը հաղթահարելու համար կարող են ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ օգտագործել: Երիտասարդների կոմպենսացիայի և ինտելեկտի միջև դրական հարաբերակցությունը, ըստ հեղինակի, նույնպես կապված է երիտասարդների ինտելեկտուալ գործընթացների զարգացման մակարդակի և խնդիրների լուծման կոմպենսատոր տարրերակներ ընտրելու հնարավորության հետ:

Կամքի ուժի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների հարաբերակցության վերլուծության արդյունքները, ըստ հեղինակի, վկայում են տարիքային խմբերում կամքի ուժի և հասուն պաշտպանական մեխանիզմների սերտ կապի մասին:

Հեղինակը երկու խմբերի հուզականության և պաշտպանական մեխանիզմների հարաբերակցության միջև բազմաթիվ հական տարրերություններ է նշում:

Հետազոտության արդյունքների համաձայն՝ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և խառնվածքի փոխհարաբերությունները սովորաբար արտահայտված են դեռահասների մոտ, իսկ երիտասարդների մոտ միջին ուժգնության կապեր են արտահայտված:

Երկու տարիքային խմբերում ուսումնասիրվել են նաև անձնային և իրադրային տագնապայնության և պաշտպանական մեխանիզմների միջև փոխհարաբերությունները: Անձնային տագնապայնության և պաշտպանական մեխանիզմների համահարաբերակցություն խմբերից ոչ մեկում չի գրանցվել: Իսկ իրադրային տագնապայնության հավաստի տարրերություններ երկու տարիքային խմբերում են արձանագրվել են: Տարրական պաշտպանական մեխանիզմների և իրադրային տագնապայնության միջև կապեր հայտնաբերվել են բացառապես դեռահասների մոտ, և հիմնականում երիտասարդների մոտ՝ ավելի հասուն պաշտպանական մեխանիզմների հետ: Ստացված տվյալները թույլ են տալիս հեղինակին եզրակացնել, որ իրադրային տագնապայնությունը հաղթահարելու համար դեռահասները, հիմնականում, տարրական պաշտպանական մեխանիզմներ են օգտագործում, մինչդեռ երիտասարդները՝ ավելի հասուն:

Բացահայտվել է նաև կոնֆիդենտալ վարքի նախատրամադրվածության ոճերի և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների, ինքնազնահատականի և պաշտպանական մեխանիզմների, ինքնազիտակցության բաղադրիչների և հոգեբանական պաշտպանական մեխանիզմների միջև համահարաբերակցությունը: Անընդհատ ընդգծում է տարիքային խմբերի միջև տարրերությունները: Հեղինակը եզրակացնում է, որ բաղադրիչների պաշտպանության գործում ներգրավված են տարրեր մեխանիզմներ: Ուսումնասիրվել են նաև երկու տարիքային խմբերում հարմարվողական և պաշտպանական մեխանիզմների փոխհարաբերությունները:

Եզրակացությունները, որ «Համապատասխանաբար, դեռահասության շրջանում տարրական պաշտպանական մեխանիզմներն ավելի շատ ներգրավված են անձի կառույցների և գծերի պաշտպանության գործում: Իսկ հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և երիտասարդների անձնային որակների ու կառույցների

ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ նրանց պաշտպանությանն ավելի հասուն պաշտպանական մեխանիզմներ են մասնակցում», եական գիտական արժեք և նորություն չեն ներկայացնում:

Առկա դիտողություններն ու առաջարկությունները հետևյալն են.

1. Վերնագրում նշված ուսումնասիրված անձնային հատկանիշները, համապատասխանաբար նպատակի, վարկածի, խնդիրների մեջ արտացոլված չեն եղել էմպիրիկ մասում, ինչը որոշակիորեն նվազեցնում է ատենախոսական աշխատանքի նշանակալիությունը: Ակնհայտ է, որ ատենախոսը շփոթում է «անձնային բնութագրեր», «անձնային հատկանիշների», «անձնային հատկություններ» (էջ 7) և «անձնային կառուցվածք» հասկացությունները: Ակնհայտ է, որ մեթոդաբանական բազայի հիմնավորումը հնարավորություն կտար պարզաբանել ատենախոսության հետազոտության այս հիմնական հասկացությունները: Որպես մեթոդաբանական հիմք, ուսումնասիրելով Բ.Գ. Անանիսի անձի կառուցվածքի հայեցակարգը, ատենախոսը, հասուն անձի վերաբերյալ մոտեցումները շատ մանրամասն բնութագրելով, չի անդրադարձել հիմք հանդիսացող տեսության քննարկմանը, ներկայացնելով միայն սխեմատիկ պատկերով (էջ 72), որը Անանիսի մոտեցումը ներկայացնում է կտրված տեսքով, ինչը թույլ չի տալիս նրան հիմնավորել տվյալ մոտեցման նպատակահարմարությունը: Անանիսի տեսական դրույթների խոր ուսումնասիրությունն ու վերաիմմաստավորումը հնարավորություն կտար ատենախոսին ավելի լավ հասկանալ անձի կառուցվածքը, որը, ըստ Անանիսի, ներառում է մեծ թվով ցուցանիշներ:

2. Վերնագրում և հետազոտության առարկայի մեջ նշված կարևոր մասը հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխհարաբերությունների դինամիկան է հասունության տարբեր փուլերում, ինչը նշված է, օրինակ, պաշտպանության ներկայացվող դրույթներում (Հոգեբանական պաշտպանությունը նպաստում է անձնային առանձին հատկությունների և կառույցների կայուն դրսերմանը (էջ 8), բայց արտահայտված չէ հետազոտության նպատակում: Դինամիկան անհնար է բացահայտել համեմատելով տարբեր մարդկանց նույնիսկ տարբեր տարիքային խմբերում:

3. «Հոգեբանական պաշտպանության» ֆենոմենն ուսումնասիրելիս հետազոտության տեսական և մեթոդական հիմքում Զ.Ֆրոյդի հոգեվերլուծական տեսության հայեցակարգային դրույթները (էջ 6) համակցված են Ս. Մալոուի և Կ. Ռոզերսի հումանիստական մոտեցման դրույթների հետ, ովքեր հիմնովին և սկզբունքորեն չեն ճանաչում հոգեբանական պաշտպանության կենսունակությունը: Սա եապես հակասական էլեկտրիկիզմ է և բացթողում:

4. Եզրակացությունները (էջ 169) վերաբերում են աշխատանքի միայն էմպիրիկ մասին, այդ պատճառով էլ ամբողջական չեն, հատվածական բնույթ են կրում:

5. Գործնական առաջարկությունները (էջ 170) կրում են ընդհանրացված-վերացական բնույթ՝ առանց տարիքային տարբերակման, որոնց տարբերության վրա հիմնականում ուղղված է եղել ատենախոսական հետազոտությունը: Առաջարկություններ անելիս խորհուրդ է տրվում նշել ատենախոսի կողմից նշված տարիքային խմբերի առանձնահատկությունները:

6. Գիտական գրականության մատենագրական ցանկում, որտեղ նշված է 131 աղբյուր, վերջին տասնամյակում հրատարակվել է ընդամենը 1 աղբյուր: Ցանկալի է, քացի դասական աղբյուրներից, օգտվել նորագույն գրականությունից:

Հաջող պաշտպանության դեպքում կարելի է վստահություն հայտնել, որ պաշտպանության ընթացքում բազմաթիվ դրույթների հիմնավորումն ու ուղղումը և լրացուցիչ մեկնաբանությունները կընդգծեն ուսումնասիրության գիտական և գործնական արժեքը:

Եզրակացություն. Ռուզաննա Ալավիկի Ժամկոցյանի՝ «Հոգեբանական պաշտպանական մեխանիզմների և անձնային որոշ բնութագրերի փոխարարերությունների դինամիկան՝ անձի հասունացման տարրեր փուլերում» ԺԹ. 00.01 – «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հաջող պաշտպանության դեպքում համապատասխանում է ԲՈԿ-ի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների գիտական աստիճանի շնորհման:

Հայ-Ռուսական (Ալավոնական) համալսարանի  
հոգեբանության ամբիոնի վարիչ,  
հոգ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ս.Ս. Բերբերյան

Նիստի քարտուղար

Ա. Ս. Բերբերյանի ստորագրությունը համատառությամբ

Հայ - Ռուսական (Ալավոնական) համալսարանի գիտական քարտուղար,

բանասիրական գիտ. թեկն.

Ո. Ս. Կասարարով



22.07.2023